2015 թվականի հունվարի 22-ին ՀՀ ոստիկանության ներքին անվտանգության վարչությունում տեղի ունեցավ նախորդ տարում կատարված աշխատանքների արդյունքների ամփոփում, որը վարում էր ոստիկանության գնդապետ Արմեն Հակոբյանը:

Ինչպես նախորդ 2-3 տարիներին, այնպես 2014 թվականի ընթացքում ներքին անվտանգության վարչության անձնակազմն աշխատել է բավարար ծանրաբեռնվածությամբ, ինչի մասին վկայում են արձանագրված ցուցանիշները.

1. ՆԱ վարչության կողմից կատարվել են ծառայողական քննություններ և ուսումնասիրություններ	**557**
2. ՆԱ վարչության կողմից նյութերն ուղարկվել են ՀՀ գլխավոր դատախազի, Հատուկ քննչական ծառայության, ՊՆ և ԱԱԾ քննչական ծառայության քննարկմանը	**33**
3. Ենթարկվել են կարգապահական տույժերի /ծառայող/	**191**
ազատվել են ոստիկանությունից	**50**

Նախկին տարիների համեմատությամբ պատկերը հետևյալն է.

-	2010	2011	2012	2013	2014
Կատարվել են ծառ. քննություններ և ուսումնասիրություններ	157	459	571	529	557
Ենթարկվել են կարգապահական տույժերի	71	156	175	141	191
Այդ թվում ազատվել են ոստիկանությունում ծառայությունից	17	61	43	41	50
Նյութերն ուղարկվել են նախաքննական մարմինների քննարկմանը	9	18	28	20	33

Կամ



Ինչպես տեսնում ենք նախորդ տարվա հետ համեմատությամբ բոլոր ցուցանիշներով զգալի աճ է արձանագրվել:

Միևնույն ժամանակ վերլուծության են ենթարկվել ՆԱ վարչության կատարած աշխատանքների արդյունքների և ոստիկանության մյուս ստորաբաժանումների կարգապահական գործունեության ցուցանիշների համադրման ուղղությամբ:

Այս առումով ևս պատկերն առավել քան խոսուն է.

Կատարվել են ծառ. քննություններ և ուսումնասիրություններ	2010թ.	2011թ.	2012թ.	2013թ.	2014թ.
ՀՀ ոստիկանություն	1202	1522	1802	1572	1657
այդ թվում՝ ներքին անվտանգության վարչություն	157	459	571	529	557
%	13 %	30 %	32 %	34 %	34 %

Ենթարկվել են կարգապահական տույժերի	2010թ.	2011թ.	2012թ.	2013թ.	2014թ.
ՀՀ ոստիկանություն	1014	1171	1129	845	846
այդ թվում՝ ներքին անվտանգության վարչություն	71	156	175	141	191
%	7 %	13 %	16 %	17 %	23 %

Այդ թվում ազատվել են ոստիկանությունում ծառայությունից	2010թ.	2011թ.	2012թ.	2013թ.	2014թ.
ՀՀ ոստիկանություն	74	94	73	61	95
այդ թվում՝ ներքին անվտանգության վարչություն	17	61	43	41	50
%	23 %	65 %	59 %	67 %	53 %

2014 թ. ընթացքում ՀՀ ոստիկանությաան ներքին անվտանգության վարչության կատարած աշխատանքների հաշվետվությունները նախապես ներկայացված էին Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետին:

ՀՀ ոստիկանության պետ Վլադիմիր Գասպարյանի հրամանով՝ 2014 թվականի օպերատիվ-ծառայողական գործունեության մեջ արձանագրած լավագույն ցուցանիշների համար՝ ներքին անվտանգության վարչության մի շարք ծառայողներ արժանացան պարգևների:

ՆԱ վարչության ծառայողական քննությունների բաժնի ՀԿՀ ավագ տեսուչ, ոստիկանության մայոր Էդգար Այդինյանին ՀՀ ոստիկանության պետի հրամանով վաղաժամկետ շնորհվել է <ոստիկանության փոխգնդապետի> կոչում:

ՆԱ վարչության օպերատիվ ապահովման բաժնի ավագ օպերլիազոր, ոստիկանության ավագ լեյտենանտ Գեղամ Վարդանյանը ՀՀ ոստիկանության պետի հրամանով պարգևատրվել է <ոստիկանությունում գերազանց ծառայության համար> կրծքանշանով:

ՆԱ վարչության օպերատիվ ապահովման բաժնի ՀԿԳ ավագ օպերլիազոր, ոստիկանության փոխգնդապետ Արթուր Սահակյանը ՀՀ ոստիկանության պետի հրամանով պարգևատրվել է <Օրենքի պատվար> մեդալով:

2014 թվականի ընթացքում վարչության մի շարք ծառայողներ ևս պարգևատրվել են:

Ամփոփելով նախորդ տարվա արդյունքներն ու ձեռքբերումները՝ վարչության պետ Արմեն Հակոբյանն աշխատանքները գնահատեց դրական և անձնակազմին փոխանցեց ՀՀ ոստիկանության պետ, գեներալ-լեյտենանտ Վլադիմիր Գասպարյանի պահանջը. 2015 թվականը հայտարարվել է կարգապահության առավել ամրապնդման տարի, այսինքն առավել խստացված պատժողական քաղաքականություն է կիրառվելու: